ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԵՆՐԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ՀԵՆՐԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգ,,-ի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով

որոշում եմ՝

1.Համաձայն Սևանի համայնքի ավագանու 2013 թվականի մայիսի 16-ի N 22-Ա որոշման թույլատրել Սևան քաղաքի Հենրիկ Դանիելյանի անվան հրապարակում իրականացնել Հայաստանի Հանրապետության վաստակավոր իրավաբան, Սևանի պատվավոր քաղաքացի Հենրիկ Դանիելյանի կիսանդրին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ